ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2021թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14[3]-րդ հոդվածի 9-րդ և 12-րդ մասերով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 20.1 կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի հ.1920-Ն որոշումը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Գ. Զոհրապի փողոցի հ.120/1, հ.120/2, հ.120/3, հ.120/4, հ.120/5, հ.120/6, հ.120/7, հ.120/8, հ.120/9 և հ.120/10 հասցեներում գտնվող Հայաստանի Հանրապետությանը սեփականության և ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասերի նպատակային նշանակությունները արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիայից փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա։

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Գ.Զոհրապի փողոցի հ.120/1, հ.120/2, հ.120/3, հ.120/4, հ.120/5, հ.120/6, հ.120/7, հ.120/8, հ.120/9 և հ.120/10 հասցեներում գտնվող Հայաստանի Հանրապետությանը սեփականության և ընդհանուր բաժնային սեփականության իրավունքներով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.17082020-01-0247, հ.17082020-01-0261, հ.17082020-01-0270, հ.17082020-01-0273, հ.17082020-01-0290, հ.17082020-01-0282, հ.17082020-01-0288, հ.17082020-01-0295, հ.17082020-01-0298 և հ.17082020-01-0304 վկայականներ) հողամասերի նպատակային նշանակություններն արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիայից փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա:

Հայաստանի Հանրապետության կառավարության 15.12.2005թ. հ.2330-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ քննարկվող հասցեում գտնվող հողամասերը գտնվում են արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կազմում:

Քննարկվող գույքային միավորները ներառված են ՀՀ Ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության շնավարժության բաժնին պատկանող գույքի կազմում, նախկինում տրամադրվել են փախստականներին և ներկայումս փաստացի զբաղեցված են վերջիններիս կողմից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերոհիշյալ գույքերը ՀՀ Ոստիկանության կողմից ներկայումս չեն օգտագործվում՝ նպատակահարմար է գտնվել հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունից հետո դրանք նվիրել փաստացի զբաղեցնողներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակելի նշանակության շինությունները նախատեսված են բնակավայրերի նպատակային նշանակության հողերի կազմում, ապա անհրաժեշտություն է առաջացել հողամասի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիայից փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության հողերի կատեգորիա:

Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը հավանության է արժանացել ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի հ.1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի կողմից:

Համաձայն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ մասերի՝ համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը և դրանց նախագծման առաջադրանքները համայնքի ղեկավարի ներկայացմամբ քննարկվում են միջգերատեսչական հանձնաժողովի նիստում և հաստատվում են համայնքի ավագանու կողմից՝ միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի ծախսերում և եկամուտներում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ